

## ՄԵԼՍ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

*Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ  
հոգեբանության, տեսության և պատմության ամբիոնի վարիչ,  
հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

## ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*ՎՊՄԻ հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս,  
ԵՊՄՀ հոգեբանության պատմության և տեսության  
ամբիոնի հայցորդ*

### **ԴԵՌԱՀԱՍԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԻՆԴՐԻ ԴՐՎԱԾՔԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Հոդվածում քննարկվում է անձի ինքնագնահատականի վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումները: Անդրադարձ է կատարվել նաև դեռահասության տարիքին՝ նշելով դեռահասության տարիքում անձի ինքնագնահատականի վերափոխումները, ինչպես նաև ինքնագնահատականի փոխադարձ կապը սեռի, կարգավիճակի և ուսման մեջ ունեցած հաջողությունների հետ:

*Հանգուցային բառեր և արտահայտություններ՝* ինքնագիտակցություն, ինքնագնահատական, ինքնավերահսկողություն, «Ես կոնցեպցիա», «Ես» կերպար:

Ժամանակակից հոգեբանության մեջ անձի ինքնագնահատականի խնդիրը ամենաարդիական և ամենաշատ ուսումնասիրվող հիմնահարցերից մեկն է: Սակայն ելակետային է համարվում ավանդական այն պատկերացումը, ըստ որի ինքնագնահատականը հանդիսանում է անձի ինքնագիտակցության մի մասը, որի վերաբերյալ կան շատ կարծիքներ: Մասնավորապես, արտասահմանյան գրականության մեջ ընդունված է «Ես կոնցեպցիա» հասկացությունը, որը նշանակում է անհատի իր մասին բոլոր պատկերացումների ամբողջություն: «Ես կոնցեպցիայում» առանձնացնում են «Ես» կերպարը, որպես մի ճանաչողական բաղադրամաս և մարդու՝ իր նկատմամբ հուզական արժեքային

վերաբերմունք, որը միևնույն դեպքում անվանում են ինքնավերաբերմունք: Այս եռաստիճան մոդելում ինքնագնահատականը նույնականացվում է սուբյեկտի հուզական արժեքային վերաբերմունքի հետ: Հազվադեպ հանդիպում ենք նաև «Ես» կերպարի և ամբողջությամբ «Ես կոնցեպցիայի» նույնականացմանը: Ակնհայտ է, որ նման մոտեցմամբ, անձի ինքնագնահատականը, որպես ուսումնասիրության առանձին առարկա անհետանում է, և մենք հետանում ենք «Ես» կառուցվաքի շատ կարևոր բաղադրամասի բացահայտումից [1, էջ 99–100]:

Խորհրդային հոգեբաններն առաջարկել են այլընտրանքային մոտեցում, այսպես՝ Ս.Լ. Ռուբինշտեյնը այն կարծիքին է, որ գիտակցությունը չի ծնվում ինքնագիտակցությունից, «Ես» – ից, այլ ինքնագիտակցությունն առաջանում է անձի զարգացման ընթացքում, երբ նա դառնում է ինքնուրույն սուբյեկտ: Իրականում ինքնագիտակցության զարգացման ոչ միստիկացված պատմությունն անխզելիորեն կապված է անձի իրական զարգացման և իր կյանքի ճանապարհի հիմնական իրադարձությունների հետ [10, էջ 635]:

«Անձի, որպես ինքնուրույն սուբյեկտի, ձևավորման առաջին փուլը կապված է սեփական մարմնի կառավարման կարողության հետ, որը կապված

է նաև առարկայական գործողությունների կազմավորման հետ»: Հաջորդ աստիճանը այս ճանապարհին, – կարծում է Լ.Ս.Ռուբինշտեյնը, քայլելու, ինքնուրույն տեղաշարժվելու կարողությունն է, որի արդյունքում երեխան իր բոլոր գործողություններում դառնում է ինքնուրույն: Այս օբյեկտիվ փաստի գիտակցման հետ է կապված անձի ինքնագիտակցության ծնունդը, ինչպես նաև առաջին պատկերացումը իր «Ես»-ի մասին: Ըստ հեղինակի ինքնագիտակցության կազմավորման ընթացքում կարևոր դեր է խաղում նաև խոսքային գործառնությունների տիրապետելը: Կարևոր դեր խաղալով երեխայի գիտակցության զարգացման մեջ, խոսքը, միևնույն ժամանակ, փոխում է երեխայի գործնական հնարավորությունները՝ փոխելով նրա հարաբերությունները շրջապատի հետ: Ս. Լ. Ռուբինշտեյնն արդարացի ընդգծում է նաև, որ այդ արտաքին իրադարձություններով ու ներքին փոփոխություններով ոչ մի կերպ չի ավարտվում անձի զարգացման և կայացման ընթացքը: Դրանք կազմում են միայն հիմքը, իսկ հետագայի կառուցումը, ավարտը և հարդարումը պայմանավորված է ուրիշ, ավելի բարդ, ներքին աշխատանքներով, որտեղ և ձևավորվում է անձը իր բարձր դրսևորումներով: Մուրյելտի ինքնուրույնությունը չի սահմանափակվում այս կամ այն հանձնարարությունները կատարելու ընդունակությամբ, այն իր մեջ ներառում է ավելի էական ընդունակություն. ինքնուրույն, գիտակցաբար իր առջև այս կամ այն խնդրի նպատակի դնելը, իր գործունեության ուղղությունների որոշելը և այլն: Իհարկե այդ ամենը ենթադրում է ինքնուրույն մտածելու ընդունակություն և կապված է ընդհանուր աշխարհայացքի ձևավորման հետ: Ըստ Ս.Լ.Ռուբինշտեյնի այս ամենը հատուկ է միայն դեռահասին, քանզի նրա մոտ ձևավորվում է քննադատական մտածողությունը, նրա

աշխարհայացքը: Մտնելով ինքնուրույն կյանք՝ դեռահասի առջև կայանում են կարևոր հարցեր, որոնք նրան ստիպում են ավելի լուրջ մտածել իր մասին, որն էլ, իր հերթին, բերում է գիտակցության զգալի զարգացման [7, էջ 241–242]:

Իսկ ահա Ա. Վ. Զախարովան ինքնագնատահատականի մասին նշում է հետևյալը՝ կատարելով նպատակալաց ազդեցություն ինքնագնահատման կառուցման վրա, անհրաժեշտ է նախ և առաջ հասկանալ, թե ինչ անձ ենք մենք ուզում ստանալ, ինչ որակավորում նրան տալ, ուզո՞ւմ ենք դաստիարակել ինքնավստահ և ինքնագոհ մարդ, որի պացումների կենտրոնը լինելու է իր սեփական «Ես»-ը, թե ուզում ենք դաստիարակել մարդասեր, ստեղծագործական ակտիվ անձ, որը կկարողանա ինքնուրույն որոշել իր սեփական զարգացման հեռանկարները [6, էջ 5–14]:

Վ.Ա.Սիսենկոն իր աշխատանքների մեջ կարևորել է ինքնագնահատականի անհրաժեշտությունը և ճիշտ ընկալումը: «Պետք է հաշվի առնել, որ մարդը շատ հակասական էակ է, որի մեջ շատ հետաքրքիր ձևով խառնված են դրական և բացասական որակները. բարոյականություն և անբարոյականություն, պատիվ և անպատվություն, առատաձեռնություն և ժլատություն, և այդպես անվերջ» [10, էջ 602]:

Եվրոպական դպրոցում մարդու էության հակասությունը հիանալի նկարագրել է Բլեզ Պասկալը: «Մենք չենք բավարարվում մեր իրական կյանքով և մեր իրական էությունով: Մեզ պետք է ստեղծել մի խումբ մարդկանց պատկերացման մեջ մի երևակայական պատկեր, և դրա համար մենք ուզում ենք թվալ: Ջանք չլինայելով՝ մենք անընդհատ զարդարում և խնամում ենք այդ երևակայական «Ես»-ը՝ ի վնաս իրական «Ես»-ի»:

Ինքնագնահատականի ուսումնասիրության ժամանակ հարկ է առանձնացնել

հետևալ մակարդակները (ասպեկտները) համարժեք և ոչ համարժեք, իջեցված կամ բարձր ինքնագնահատական և ճկունությունը: Բարձր ինքնագնահատականը և ինքնահարգանքը փաստում են այն մասին, որ անձի հոգեկան կյանքը անցնում է առանց սուր ներքին բախումների, իսկ եթե դրանք պատահում են, ապա մարդը բավականին հաջող կերպով հաղթահարում է դրանք: Բարձր ինքնահարգանքը մարդու հոգևոր հարմոնիայի անհրաժեշտ տարրն է: Հոգևոր հավասարակշռություն, հարմոնիա պահպանելու համար մարդուն անհրաժեշտ է սեփական արժանապատվության զգացում և պահպանում: Այսպիսով, ինքնագնահատականը ոչ թե մարդու ինչ-որ քնահաճույք է, այլ հոգևոր անհրաժեշտություն, պահանջմունք:

Սեփական արժանապատվության զգացումը պահպանելու պահանջն ամենասերտ ձևով կապված է այն սահմանման հետ, որը մարդը տալիս է ինքն իրեն և որը գիտական հոգեբանության մեջ ստացել է «Ես կոնցեպցիա» անվանումը: Ինչպես նշում է Վ.Ա Միսենկոն այստեղ նկատի է առնվում այն, որ մեզնից ամեն մեկը գտնում է իրեն և տալիս է իր բնութագրումները: Բայց բոլոր ինքնաբնութագիրները ծնված են ոչ միայն սեփական սուբյեկտիվ ապրումների, մտածումների վրա, այլ այս կամ այն չափով հիմնված են բարեկամների, ծնողների, ընկերների, մտերիմների կարծիքների վրա: Բնական է, որ ինքնաբնութագրի մեջ սուբյեկտիվ պահերը գերակշռում են: Ամեն մարդ շատ թե քիչ չափով հակում ունի իր իդեալական «Ես»-ը ի ցույց դնելու իրականի փոխարեն: Բայց ամեն դեպքում մարդը սպասում է իր մտերիմներից այն «Ես կոնցեպցիայի» տեղեկատվության հաստատմանը, որ ինքը ստեղծել է իր մասին իր երևակայության մեջ: Այս դեպքում սերը, ընկերությունը, ջերմությունը,

ուշադրությունն այլ մարդու կողմից շատ կարևոր հոգեբանական պարագա է, որը մեր սեփական «Ես»-ի կարևորությունն ու արժեքն է ցույց տալիս [10]: Երբեմն մարդը զգում է, գիտակցում, որ ինքը չի համապատասխանում սոցիալական չափանիշներին, «կիրթ», «քաղաքակրթված» մարդու կերպարին, ինչն էլ նրա մոտ առաջացնում է մեղքի, ամոթի, անվստահության և թերի լինելու զգացում: Նման զգացումներինից և ապրումներից ազատվելու համար մարդուն անհրաժեշտ են այլ մարդկանց կողմից տրված գնահատականները, որի համաձայն ինքն ընդունվում է որպես «լավ», «բարոյական», «մաքուր», «բարի», «մեծահոգի» անձնավորություն: Նման տեղեկատվությունը պետք է մարդուն նրա համար, որ ուրիշների կողմից տրված ինքնագնահատականին համապատասխանող վերաբերմունքի դրսևորումները հաստատում են անձի սեփական գնահատականի ճշմարտացիությունը:

Բոլորին հայտնի է, որ մարդը սոցիալական էակ է, որը չի պատկերացնում իրեն առանց այլ մարդկանց գոյության: Ամենաշատը նա վախենում է միայնակ լինելուց, իրեն հարազատ և թանկ մարդկանցից օտարանալուց, լքված լինելուց: Ուստի, սիրված լինելը և մտերիմներով մեծարվելը շատ մեծ երաշխիք է, որ օտարվելու, մենակ լինելու և մեկուսացման վտանգ գրեթե չկա: «Պետքական լինելը լիարժեք կյանքի պայմանն է: Երբ ես պետք եմ, ինձ հետ ուղեղն է, ուժը և հմայքն է: Այդ ժամանակ ես ամուր եմ և համոզված իմ ճիշտ լինելու մեջ: Երբ ես պետք չեմ, ես թույլ եմ և անօգնական, վատ են գործում իմ ուղեղը և կարողությունները: Ես զգում եմ ինձ ողորմելի, մեղավոր, ինքս էլ չգիտեմ ինչու: Միայն այն միտքը, որ դու մեկ ուրիշի պետք ես, ուժ է տալիս և վստահություն» [10, էջ 579–580]:

Լինելով բարդ կառուցվածքային համակարգ, ինքնագնահատականը

դրսևորվում է տարբեր ձևերով: Իր կառուցվածքում այն ունի երկու բաղադրիչ կոզնիտիվ և հուզական: Կոզնիտիվ բաղադրիչն արտացոլում է մարդու գիտելիքներն իր մասին: Հուզականը՝ մարդու վերաբերմունքն է ինքն իրեն, կապված իր գործողությունների բավարարվածության չափից, դրված նպատակների իրական արդյունքներից: Ինքնագնահատման ընթացքում այդ բաղադրիչները գործում են անբաժանելի միության մեջ, ոչ մեկը, ոչ մյուսը, ինչպես նշում է Ի.Ի.Չեսնոկովան, չի կարող ներկայացվել «մաքուր տեսքով»: Իր մասին գիտելիքները մարդը ստանում է գործունեության արդյունքի համատեքստից: Դրանք անխուսափելիորեն զուգակցվում են հույզերով, որոնց ուժը և լարվածությունը կապված են իր համար կարևորություն ունեցող ձեռքբերման նշանակությունից: Ցանկացած ինքնաբնութագիր ունի գնահատական, որն իրական կյանքում գործում է դրսևորման այս կամ այն աստիճանով [5, էջ 7-8]:

Ինքնագնահատականը հանդես է գալիս երկու կարևոր ձևերով՝ ընդհանուր և մասնավոր (մասնակի կամ կոնկրետ): Հետազոտողները համաձայն են նրանում, որ մասնավոր ինքնագնահատականն արտացոլում է սուբյեկտի արարքների, գործողությունների, վերաբերմունքների գնահատականը: Դրանք կարող են կրել ինչպես ընդհանրացրած, այնպես էլ իրադրային բնույթ: Դրանց մեջ հատուկ տեղ են զբաղեցնում, այսպես կոչված, օպերատիվ ինքնագնահատականները, որոնք արտացոլում են անձի կողմից անմիջապես հաշվի առնվող, փոփոխվող պարագաները: Ավելի քիչ ուսումնասիրված է ընդհանուր ինքնագնահատականը: Այն ուսումնասիրում են որպես միաչափ փոփոխական, որն արտացոլում է անձի դրական և բացասական վերաբերմունքը այն ամենին, ինչը մտնում է «Ես» կառուցվածքի մեջ: Ընդ-

հանուր ինքնագնահատականի այսպիսի հասկացությունը հանգեցնում է նրան, որ իր էությունը, անձի էնոցիոնալ արժեքային վերաբերմունքը, նրա կոզնիտիվ բաղադրիչը, զարգացման և գործելու յուրահատկությունները դուրս են գալիս հետազոտողների տեսադաշտից:

Ակտուալ ինքնագնահատականի գործառույթն է հանդիսանում անձի գնահատականը և նրա վրա հիմնված գործողությունների շտկումը: Խ. Հեկհաուզենը նման տիպի ինքնագնահատականները բացատրելու համար օգտագործում է «ընթացիկ» և «ինքնադիտողական» ինքնագնահատական հասկացությունները, նշելով, որ նա նկատի ունի հուզական վիճակը, սպասումների փոփոխությունը, Ես «գործողության հաջողության» աստիճանը: Այդ տիպի ինքնագնահատականի կարևոր հոգեբանական ներքին կառուցվածքում առաջատարը ինքնավերահսկողության գործողություններն են, որոնք իրենց վերջնական մասում պարունակում են մասնակի ինքնագնահատականներ [5, էջ 11]:

Հետադարձ (ռետրոսպեկտիվ) ինքնագնահատականի գործառույթը սուբյեկտի գնահատականն է՝ ուղղված զարգացման մակարդակին, գործողության արդյունքներին, արարքներին, հետևանքներին և այլն: Բայց նրա նշանակությունը չի սահմանափակվում միայն արդյունքների ամփոփումով, նա մասնակցում է սուբյեկտի զարգացման հեռանկարում, քանի որ ինքնիրացման ընթացքում կարևորվում են գործողության և անձի թե՛ դրական, թե՛ բացասական կողմերը: Կատարելով կարգավորիչ գործառույթներ, ինքնագնահատականը սուբյեկտի վարքի կազմակերպման անհրաժեշտ ներքին պայմանն է: Ինքնագնահատականի կարգավորիչ գործառույթներն իրենց ուղղվածությունով և վերջնական արդյունքով բաժանվում են. գնահատիչ, հսկիչ, խթանող, սահմա-

նափակող, պաշտպանական: Ի դեպ, այդ գործառույթները չեն սահմանափակվում հարմարման խնդիրների լուծմամբ, շրջապատող պայմաններին սուբյեկտի ընտելացմամբ: Դա մարդու՝ իր ուժերը մոբիլիզացնելու կարևորագույն գործոնն է: Ինչպես ինքնակարգավորող մեխանիզմ ինքնագնահատականը գոյություն ունի մարդու կյանքի բոլոր բնագավառներում, գործունեության, վարքի, շփման և այլ դրսևորումներում: Այն, որ մարդու գործունեության հաջողությունը կախված է ոչ պակաս իր ընդունակությունների մասին պատկերացումներից, քան հենց գոյություն ունեցող այդ ընդունակությունից, կասկած չի առաջացնում:

Բազմաթիվ հետազոտություններում առաջադրվում է այն գաղափարը, որ ինքնագնահատականի կարգավորիչ գործառույթները զգալիորեն բարձրանում են սուբյեկտի անձնական գործունեությամբ: Հոգեբանական պաշտպանողական գործառույթները, որպես կանոն, իրականանում են բարձր ինքնագնահատականի դեպքում, որը նպաստում է հուզական սահմանափակումների զարգացմանը: Վերջիններս էլ, իրենց հերթին, սահմանափակում են ընկալման արտաքին ազդեցությունները, որոնք տանում են փորձի խեղաթյուրմանը և անտեսմանը: Այս գործընթացում հանդես են գալիս հետևյալ մեխանիզմները. ուրիշ մարդկանց գնահատականների իջեցում, բարձր ինքնագնահատականի անհիմն տեղափոխումներ մի ոլորտից մյուսը, ազրեսիայի աճ, գործունեության հանդեպ հետաքրքրության կորուստ, ինքնարդարացում, օտարացում [5, էջ 7-12] :

Չնայած ինքնագնահատականի վերաբերյալ գոյություն ունեցող հարուստ մոտեցումներին, այնուամենայնիվ սխալ կլինեք ինքնագնահատականի տարիքային հոգեբանական յուրահատկությունների գոյությունը հերքել:

Ինքնագնահատականի կայացումը

կապված երեխայի ինքնագնահատականի ավելի կատարյալ միջոցների տիրապետման հետ, իր մասին գիտելիքների լայնացման, խորացման և ընդհանրացման հետ, հուզական արժեքային վերաբերմունքը տարիքի հետ աստիճանաբար տարբերակվում և ընդհանրացվում է:

Ինչ վերաբերվում է դեռահասության տարիքին, ապա հաճախ ինքնագնահատականը դեռահասի մոտ ներքուստ հակասական է: Գիտակցաբար ինքն ընդունում է իր նշանակալի անձ լինելը, նույնիսկ բացառիկ, հավատում է իր ուժերին, իր կարողություններին, վեր դասում իրեն ուրիշներից, միաժամանակ ներքուստ ինքը կասկածներ ունի, որոնք աշխատում է իր գիտակցության մեջ չթողնել: Բայց այդ ենթացիտակցական անվստահությունը իր մասին զգացնել է տալիս վատ տրամադրության, ակտիվության անկման մեջ և այլն: Այդ վիճակների պատճառը դեռահասը ինքը չի հասկանում, բայց դրանք գտնում են իրենց արտահայտումը նեղացկոտության, կոպտության մեջ, շրջապատող մեծերի հետ հաճախակի բախումներում [4]:

Դեռահասության տարիքի սկզբին ինքնագնահատականի դերը երեխայի կյանքում ավելի է կարևորվում, արտաքին գնահատականները փոխվում են ինքնագնահատմամբ: Ինքնագնահատականի բովանդակությունը բարդանում է, նրա մեջ ներառվում են բարոյական նորմերը, շրջապատի նկատմամբ վերաբերմունքը, սեփական կարողությունները: Դեռահասության տարիքում ավելի արտահայտված են դառնում ինքնագնահատականի հուզական բաղադրամասերի զարգացումը: Հուզական արժեքային վերաբերմունքն ինքն իր հանդեպ դառնում է առաջնային դեռահասի ներքին կյանքում: Մրվում է արտաքին գնահատականների ընդունումը, և ինքնարևակալումների սեփական հատկանիշների գնահատումը դառնում է դեռահասի կենսական խնդի-

րը: Իր նկատմամբ բարձր հուզական վերաբերմունքը դանդաղեցնում է ինքնագնահատման կոգնիտիվ բաղադրամասի կատարելագործումը, իսկ ահա անցումը պատանեկան տարիքին բնութագրվում է ինքնագնահատման ճանաչողական և հուզական բաղադրամասերի հավասարազոր զարգացմամբ: Ստեղծվում են գրեթե կայուն պատկերացումներ իր մասին, որպես ամբողջական անձի, որը տարբերվում է ուրիշներից: Առաջնային նորամուծությունը պատանեկան տարիքում ինքնորոշման պահանջներն են, գիտակցումն այն բանի, որ ինքը հասարակության անդամ է:

Այսպիսով, նախադպրոցական տարիքում ավելի արագ տեմպերով զարգանում է և ավելի արտահայտիչ է գործում ինքնագնահատման հուզական բաղադրամասը, կրտսեր դպրոցական տարիքում՝ ճանաչողական: Գեռահասության տարիքում կրկին հուզական բաղադրիչը, պատանեկան տարիքում առաջին պլան է դուրս գալիս ճանաչողական բաղադրիչը, որն իր վրա է վերցնում հույզերի կարգավորման գործառնությունը:

Ա. Ա. Ռեանի հետազոտություններում դիտարկվում է այն փաստը, որ դեռահասների ֆիզիկական ազդեցիկայի մակարդակը համահարաբերակցվում է անձի ընդհանուր ինքնագնահատականի մակարդակի հետ: Ինչքան մեծ է ինքնագնահատականը, այդքան մեծ է ֆիզիկական ազդեցիկա ցուցաբերելու հակումը: Նման համահարաբերակցում նկատվում է նաև վերբալ ազդեցիկայի դեպքում՝ այն համահարաբերակցվում է դեռահասների ինքնագնահատականի տարբեր կողմերի հետ: Դա նույնն է, ինչը որ նեգատիվ իզոմի դեպքում: Վերբալ ազդեցիկայի մակարդակը բարձր է նրանց մոտ, ում լիդերական ընդունակությունների ինքնագնահատականը բարձր է: Բացի այդ, վերբալ ազդեցիկան կապված է սեփական ինքնուրույնության, ինքնավստահու-

թյան և ինտելեկտի ինքնագնահատման մակարդակի հետ: «Գեռահասության շրջանը շատ կարևոր է, որպես երեխայի զարգացման և ինքնագնահատականի ձևավորման ժամանակաշրջան, որն անմիջականորեն ազդում է հետագայում ինքնաճանաչման գործընթացի, ինքնադաստիարակության և, ընդհանրապես, անձի ձևավորման վրա» [9, էջ 372 ]:

Ա. Ա. Ռեանը անդրադարձել է նաև դեռահասության տարիքում անձի ինքնագնահատականի վերափոխումներին.

1. Կրտսեր դեռահասության տարիքից դեպի ավագ շրջանը դեռահասների ինքնագնահատականի բովանդակությունը խորանում և վերափոխվում է ուսումնական գործունեությունից դեպի ընկերների հետ փոխհարաբերությունները, իր իսկ ֆիզիկական որակները:

2. Ինքնաքննադատության բարձրացման հետ զուգահեռ դեռահասի ինքնագնահատականը դառնում է ավելի համարժեք, նա պատրաստ է ընդունելու իր և՛ դրական, և՛ բացասական որակները:

3. Ինքնագնահատականի մեջ ավելի ցայտուն են դառնում բարոյական որակները, կարողությունները և կամքը:

4. Տեղի է ունենում ինքնագնահատականի հետագա անկախացումը արտաքին գնահատականից, սակայն իրենց համար կարևոր նշանակություն ունեցող մարդկանց տված գնահատականը դեռևս մեծ ազդեցություն է ունենում դեռահասի ինքնագնահատականի վրա:

5. Ծնողների ազդեցությունը ինքնագնահատականի վրա նվազում է, փոխարենը մեծանում է հասակակիցների ազդեցությունը, որպես հեղինակավոր խումբ:

6. Ինքնագնահատականն ազդում է նաև գործունեության հաջողության և դեռահասի կոլեկտիվում ունեցած սոցիալ հոգեբանական կարգավիճակի վրա, կարգավորում է շփման գործընթացը:

7. Անհամարժեք ինքնագնահատականը կարող է հանգեցնել հակահասարակական վարքագծի:

8. Դեռահասի անձնային ինքնագնահատականը փոխկապակցված է ներդրողի վիճակի հետ [9, էջ 372]:

Մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն նաև հետազոտություններ, որտեղ ուսումնասիրվում են դեռահասի ինքնագնահատականի փոխադարձ կապը սեռի, կարգավիճակի և ուսման մեջ ունեցած հաջողությունների հետ: Հանձինս Յա.Լ. Կոլմինսկու, բացահայտվել է դեռահասի ինքնագնահատականի և նրա սոցիալ-հոգեբանական կարգավիճակի փոխկապակցվածությունը.

- Ցածր կարգավիճակ ունեցող սովորողների մոտ սոցիոմետրիկական կարգավիճակի գերագնահատված ինքնագնահատականի և բարձր կարգավիճակ ունեցողների մոտ դիտարկվել է թերագնահատված ինքնագնահատականի միտում:
- Եսակենտրոն համահավասարեցում՝ խմբի անդամների կամ սեփական կարգավիճակին հավասար, կամ էլ ավելի ցածր կարգավիճակ ունեցողների մոտ թերագնահատված ինքնագնահատականի միտում:
- Ռետրոսպեկտիվ օպտիմիզացում – նախկին խմբերում սեփական կարգավիճակը ավելի բարենպաստ գնահատելու միտում – ակնհայտ է, որ գոյություն ունի նաև հետադարձ կապ [Я. Л. Коломинский 1976]: Դժվար դեռահասի մեկուսացվածությունը կարող է լինել ոչ միայն այն

պատճառով, որ նա կոլեկտիվից հեռու է կանգնած, անտեսում է նրա նպատակները և վարքի նորմերը, այլև այդ ամենի հետևանք [3, էջ 121]:

Գոյություն ունի նաև փոխկապակցվածություն ինքնագնահատականի և անձի որակների միջև, օրինակ՝ դրանց համապատասխան մակարդակի առկայությունը նպաստում է դեռահասի մոտ սեփական ուժերի հանդեպ վստահության, ինքնաքննադատության և համառության ձևավորմանը, իսկ ոչ համապատասխանության դեպքում լինում է հակառակը: Ռոշալի կապ է նկատվում նաև ինքնագնահատականի բնույթի և ուսումնական ու հասարակական ակտիվության միջև. համարժեք ինքնագնահատական ունեցող դեռահասները հասնում են ավելի բարձր ցուցանիշների, կտրուկ փոփոխությունները ուսման մեջ նրանց բնորոշ չեն և նկատվում է ավելի բարձր հասարակական ու անձնական կարգավիճակ (Коломинский Я. Л, Носенко Э. Л, Реан А. А.): Համարժեք ինքնագնահատականով դեռահասներն ունեն հետաքրքրությունների մեծ շրջանակ, նրանց ակտիվությունն ուղղված է տարբեր բնույթի ակտիվության, այդ թվում նաև միջանձնային: Բարձր ինքնագնահատականի հակված դեռահասները դրսևորում են ակտիվության սահմանափակություն և շփման հանդեպ մեծ ուղղվածություն, ընդ որում՝ բովանդակությամբ փոքր-ինչ գիջող: Ագրեսիվ դեռահասներին բնութագրական է ծայրահեղ ինքնագնահատականը՝ կամ խիստ բարձր, կամ խիստ ցածր [2, էջ 363]:

*Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 24.07.2013*

## ՊՐԱՇՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Божович Л. И.** Этапы формирования личности в онтогенезе. Психология развития: Хрестоматия по психологии. – СПб., 2001.
2. **Бобнева М. И.** Социальные нормы и регуляция поведения. – М.: Наука, 1978. – 311 с.
3. **Бодалев А. А.** Восприятие и понимание человека человеком. М., 1982.
4. **Божович Л. И.** Проблемы формирования личности. – М.: Просвещение, 1995. – 352 с.
5. **Джеймс У.** Психология самосознания: Хрестоматия. Самара, 2003.
6. **Захарова А. В.** Структурно–динамическая модель самооценки. // Вопросы психологии. – 1989. с. 5 –14.
7. Психология личности. Том 1. Самара 2002, –510 с.
8. Психология личности. Том 2. Самара 2002, –542 с.
9. **Реан А. А.** Психология человека от рождения до смерти , СПб., – 2002. – 656 с.
10. **Рубинштейн С. Л.** Основы общей психологии. – СПб.: Питер, 2003 – 713 с.

### ПОСТАНОВКА ПРОБЛЕМЫ САМООЦЕНКИ ЛИЧНОСТИ ПОДРОСТКА В ПСИХОЛОГИИ

**ՄԿՐՏՄՅԱՆ ՄԵԼՅՏ**

*Доктор психологических наук, профессор, заведующий кафедрой теории и истории психологии Армянского государственного педагогического университета имени Хачатуря Абовяна*

**ԴԵՎՈՐԳՅԱՆ ԱՆՆԱ**

*Преподаватель кафедры психологии и социологии Ванадзорского государственного педагогического института имени Ов. Туманяна*

Проблема самооценки личности является одной из актуальных и изучаемых в современной психологии, чему и посвящена данная статья. В статье рассматривается проблема самооценки личности подростка, а также трансформации самооценки в этом возрасте.

*Дата представления статьи 24.07.2013*

### THE PROVISION OF TEENAGER'S SELF-ESTEEM ISSUE IN THE MODERN PSYCHOLOGY

**MELS MKRTUMYAN**

*Doctor of Psychological Sciences, Professor  
Head of the Chair of Psychology Theory and History,  
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan*

**ANNA GEVORGYAN**

*Lecturer at the VSPI named after H. Tumanyan,  
Department of Psychology and Sociology*

The problem of self-esteem is discussed in the article. It is stated as the most modern and researched issue in the Modern Psychology. It is also spoken about the issue of the individual self-esteem of and transformations of demonstrated self-esteem of the teenager.

*Article submission date 24.07.2013 p.*